



ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ՂԱՐՁՎԱԾՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ *

ՀՏԴ 81`28

DOI: 10.52063/25792652-2024.4.23-108

ՌԵՆԱ ՄՈՎՍԵՍՅԱՆ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի
հայագիտության ամբիոնի դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատող,
բանասիրական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

rena-mov@mail.ru

ORCID: 0009-0007-1359-8362

Ղարաբաղի բարբառի ուսուցումը մեր օրերում բազում անգամ կարևորվում է, որովհետև բարբառը կտրվել է բարբառային միջավայրից, Ադրբեջանը վարում է արցախագիտության ոչնչացման հետևողական քաղաքականություն, դրա դեմ պայքարելու եղանակներից մեկն էլ Ղարաբաղի բարբառի և նրա մեջ արտացոլված լեզվամտածողության, մշակույթի, աշխարհայացքի, արժեհամակարգի ուսուցումն ու պահպանումն է՝ դրա միջոցով սերունդների մեջ ձևավորելով ազգային ինքնաճանաչողություն, ինքնավստահություն և ինքնապաշտպանական կարողություններ:

Լեզվական միավորներից դարձվածները լավագույնս են արտացոլում ժողովրդի մտածողությունը, բարքերը, բարոյական արժեքները, կենսափիլիսոփայությունը, որովհետև դրանք ժողովրդական լեզվում հղկված, իմաստային առումով խտացված կառույցներ են:

Մեր աշխատանքի նպատակն է առաջարկել սկզբունքներ և մեթոդական հնարներ, որոնք սովորողների կողմից Ղարաբաղի բարբառի դարձվածների և դրանց միջոցով Արցախի ժողովրդի լեզվամտածողության ու կենսափիլիսոփայության յուրացումը կդարձնեն ավելի արդյունավետ և համակողմանի:

Այդ նպատակին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել Ղարաբաղի դարձվածները, դրանց դասակարգման սկզբունքները
2. տարբեր սերունդների ներկայացուցիչներից հարցումներ կատարելու միջոցով որոշել այն դարձվածների կենսունակությունը, որոնց անդրադարձել ենք
3. առաջարկվող մեթոդական հնարները կիրառել տարբեր լսարաններում՝ արդյունավետությունը որոշելու համար

Հոդվածում կիրառվել են վերլուծության, համադրության, համեմատության մեթոդները:

Բարբառային դարձվածների ուսուցման արդյունավետությանը կնպաստեն հետևյալ սկզբունքները.

* Հոդվածը ներկայացվել է 08.12.2024թ., գրախոսվել՝ 23.12.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.12.2024թ.:

1. Դարձվածներն ուսուցանել զուգադրական մեթոդով՝ համեմատելով գրական հայերենի համապատասխան միավորների հետ՝ հենվելով սովորողների՝ գրական հայերենի դարձվածաբանությունից ունեցած գիտելիքների վրա:

2. Առանձնապես կարևորել և որպես օրինակներ ընտրել այնպիսի դարձվածներ, որոնք ավելի ընդգրկուն պատկերացում են տալիս արցախցու բնավորության ամենաարտահայտված գծերի, կենսակերպի ու մտածողության մասին:

3. Ուսուցման գործընթացում արդյունավետորեն համադրել ավանդական և ժամանակակից մեթոդները, կիրառել մեթոդական հնարներ, որոնք ուսուցումը կդարձնեն հետաքրքիր և ոչ միապաղաղ:

4. Հաշվի առնել տվյալ դարձվածների գործածության հաճախականությունը, կենսունակությունը ինչպես բնավոր խոսքում, այնպես էլ գեղարվեստական գրականության մեջ:

Հիմնաբառեր՝ Ղարաբաղի բարբառ, լեզվամտածողություն, զուգադրական մեթոդ, քառաթև աղյուսակ, դարձվածային սերտաճում, դարձվածային միասնություն, դարձվածային կապակցություն, հիմնաբառ, բառացի փոխադրում:

Ներածություն

Այս կամ այն լեզվի բարբառների ուսուցումը նպաստում է տվյալ լեզվի պատմության, լեզուն կրող ժողովրդի պատմության, մշակութաբանության, ազգագրության համակողմանի ուսուցմանը: Հետևապես՝ սովորողների կողմից հայերենի բարբառների ուսումնասիրությունը կնպաստի ազգային արժեհամակարգի խորապես ճանաչմանն ու պահպանմանը: Այս առումով Ղարաբաղի բարբառի ուսուցումը մեր օրերում բազում անգամ կարևորվում է, որովհետև բարբառը կտրվել է բարբառային միջավայրից, ազերիների կողմից ոչնչացվում է Արցախի մշակույթը, խեղաթուրվում հազարամյակների պատմությունը: Աղբյուրները վարում է արցախագիտության ոչնչացման հետևողական քաղաքականություն, ինչի դեմ պայքարելու եղանակներից մեկն էլ Ղարաբաղի բարբառի և նրա մեջ արտացոլված լեզվամտածողության, մշակույթի, աշխարհայացքի, արժեհամակարգի ուսուցումն ու պահպանումն է՝ դրա միջոցով սերունդների մեջ ձևավորելով ազգային ինքնաճանաչողություն, ինքնավստահություն և ինքնապաշտպանական կարողություններ:

Լեզվական միավորներից դարձվածները լավագույնս են արտացոլում ժողովրդի մտածողությունը, բարքերը, բարոյական արժեքները, կենսափիլիսոփայությունը, որովհետև դրանք ժողովրդական լեզվում հղկված, իմաստային առումով խտացված կառույցներ են. «Դարերից ի վեր սերնդից սերունդ ավանդված այս դարձվածները անընդհատ մշակվել են, հղկվել ու բյուրեղացել՝ ընդհանրացնելով ու խտացնելով իրենց մեջ փորձությունների հորձանքների ու արհավիրքների բովով անցած մի ամբողջ ժողովրդի կենսափիլիսոփայությունը, ազգային սովորություններն ու բարքերը, դառնալով միայն իրեն՝ հայությանը հատուկ մտածողության ձև» (Պապոյան 79):

Բացի դրանից դարձվածի ուսուցումն իր առանձնահատուկ տեղն ունի, քանի որ այն «ոչ միայն հարստացնում է խոսողի բառապաշարը, զարգացնում է լեզվամտածողությունը, այլև յուրահատուկ կապող օղակ է լեզվի բաժինների միջև: Դարձվածքները կարելի է ուսումնասիրել բառային, ձևաբանական, շարահյուսական, ոճաբանական կտրվածքներով» (Դարձվածային տարբերակների ուսուցումը բուհական դասընթացում նախագծային մեթոդի կիրառումով):

Մեր աշխատանքի նպատակն է առաջարկել սկզբունքներ և մեթոդական հնարներ, որոնք սովորողների կողմից Ղարաբաղի բարբառի դարձվածների և դրանց միջոցով Արցախի ժողովրդի լեզվամտածողության ու կենսափիլիսոփայության յուրացումը կդարձնեն ավելի արդյունավետ և համակողմանի:

Սույն հոդվածը կարող է կիրառվել «Դարձվածաբանություն», «Բարբառագիտություն» դասընթացների ուսուցման համար:

Բարբառային դարձվածների ուսուցման սկզբունքներ

Բարբառային դարձվածների ուսուցման արդյունավետությանը կնպաստեն հետևյալ սկզբունքները.

1. Դարձվածներն ուսուցանել զուգադրական մեթոդով՝ համեմատելով գրական հայերենի համապատասխան միավորների հետ՝ հենվելով սովորողների՝ գրական հայերենի դարձվածաբանությունից ունեցած գիտելիքների վրա:

2. Առանձնապես կարևորել և որպես օրինակներ ընտրել այնպիսի դարձվածներ, որոնք ավելի ընդգրկուն պատկերացում են տալիս արցախցու բնավորության ամենաարտահայտված գծերի, կենսակերպի ու մտածողության մասին:

3. Ուսուցման գործընթացում արդյունավետորեն համադրել ավանդական և ժամանակակից մեթոդները, կիրառել մեթոդական հնարներ, որոնք ուսուցումը կդարձնեն հետաքրքիր և ոչ միապաղաղ:

4. Հաշվի առնել տվյալ դարձվածների գործածության հաճախականությունը, կենսունակությունը ինչպես բանավոր խոսքում, այնպես էլ գեղարվեստական գրականության մեջ:

Ուսուցումն արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է նյութը մատուցել գրական հայերենի հետ զուգադրման մեթոդով՝ հենվելով գրական հայերենի դարձվածների մասին սովորողների ունեցած գիտելիքների վրա:

Եվ որպեսզի մատուցվող նյութը ամբողջապես ընկալելի լինի նաև ոչ բարբառակիր սովորողների համար, առաջարկում ենք կազմել քառաթև աղյուսակ, որտեղ կներկայացվեն դարձվածը, բառացի թարգմանությունը՝ գրական հայերենով, դարձվածային իմաստը և դարձվածի՝ գրական հայերենի տարբերակը, եթե կա: (Աղյուսակ 1)

Աղյուսակի օգնությամբ գրական հայերենի հետ զուգադրումը և միավորների դարձվածային իմաստը ավելի ընկալելի կլինի, ուստի առաջարկում ենք ամբողջ դասին այս աղյուսակը ունենալ ձեռքի տակ և ուսումնասիրվող բոլոր դարձվածները տեղադրել այստեղ:

Ղարաբաղի բարբառի դարձվածների դասակարգումը

Խթանման փուլում նպատակահարմար է առանձնացնել կարևոր հասկացություններն ու եզրույթները՝ **դարձված, կայուն կապակցություն, վերափմաստավորում, դարձվածային սերտաճում, դարձվածային միասնություն, դարձվածային կապակցություն, հաղորդակցական դարձվածային միավորներ** և այլն, վերիիշել դրանց սահմանումները:

Բարբառային դարձվածները պետք է դասակարգել՝ հիմք ընդունելով հայ և օտար լեզվաբանության մեջ ամրագրված սկզբունքները՝ ըստ դարձվածը կազմող բաղադրիչների սերտության աստիճանի և ըստ կառուցվածքափմաստաբանական բնութագրության:

Ելնելով դարձվածի ընդհանուր իմաստի և դարձված կազմող բաղադրիչների իմաստների ձուլվածության աստիճանից՝ Ղարաբաղի բարբառի դարձվածները ևս

բաժանվում են երեք խմբի՝ **դարձվածային սերտաճում, դարձվածային միասնություն և դարձվածային կապակցություն:**

Դարձվածային սերտաճումներն ունեն բաղադրիչների իմաստային ձուլվածության սերտ աստիճան, այնպես որ դրանք հասկանալ կարող է միայն տվյալ ժողովրդի սովորությունները լավ իմացող, նրա աշխարհընկալմանը լավ ծանոթ ընթերցողը: Այսպես՝ **պոփերը կօխ տալ¹** (խմորագնդերը կոխկրտել)-**չափն անցնել, փօխկումը փրթորաղ ինիլ** (փողջում կռատուկ (կպչուն սերմերով վայրի խոտաբույս լինել))-**մեղավոր լինել, քանդիլը ծըմակավր օնել** (պարանը անտառով անցկացնել), **դժվար՝ կարողություններից վեր գործ ձեռնարկել, պօրտը շօն տարած** (պորտը շուն տարած)- **պարապ-սարապ թափառող, փեշկը քօլեն տալ** (քղանցքը տալ թփին)- **չարչարվել, տքնել, շօնը ճողած, մաչան տուն եկած** (շունը պատռած, միջից դուրս եկած)- **ճարպիկ, խորամանկ, տափան անգուն օնել** (գետնին ականջ դնել)- **քնել, հափռումը չօփ տինիլ** (բռան մեջ փայտիկ դնել)-**մեկին գերազանցել հնարամտությամբ, գործով, կըռքեն տակեն շիրա մընալ** (ատամի տակ խաղողի հյութ մնալ)-**մի բանի համը, հաճույքը չմոռանալ** և այլն:

Դարձվածային միասնությունների իմաստները թույլ կերպով ենթադրվում են բաղադրիչների իմաստներից, **քըբը ցեց- գոռոզ, թակ օտել-ծեծվել, նըստա մըրդավըտ կյալ -մարդկային լինել, օնքեն թուխպերը յըտ տանել -տխրությունն անցնել, խըբը կտրել -հասկանալ, խօսկ քաշիլ -գաղտնիքը փորձել իմանալ, պերանը կարել -լռեցնել, կուպար անել -շատ գնալ-գալ, ծօխը կըտըրցընել**- օջախը քանդել, **լուզվան լւնց օտել -բամբասանքից տուժել, կըռքը կըտրել- ի գորու լինել** և այլն:

Դարձվածային կապակցությունները իմաստային առումով ավելի թույլ միացություններ են, այսինքն՝ դարձվածի ընդհանուր իմաստը համարյա բխում է կապակցություն կազմող բաղադրիչների բառային իմաստների գումարից: Ինչպես՝ **ուրան թափ տալ -լիցքաթափվել, խըբը տեղը չինիլ-1. անուշադիր լինել, 2.խենթ լինել, լուս լուսանալ -հաջողություն գալ, լուս ընգնել -հայտնվել, կըլխեն պահել -մեծարել, խօսկը տըբդավը տանել -նպատակին հասնել, Աստուծ մըբ ա-մի ելք կգտնվի, պետք չէ հույսը կորցնել, թակ օտել- ծեծվել, պըռօշը նի չի տալ- ուտելիքից բոլորովին չօգտվել** և այլն:

Լեզվաբանական գրականության մեջ դարձվածներն ըստ կառուցվածքային մասնատրանսկան առանձնահատկությունների բաժանվում են երկու խմբի՝ **անվանական դարձվածային միավորներ և հաղորդակցական դարձվածային միավորներ:**

Առաջին խմբի դարձվածներն ունեն բառակապակցության, երկրորդ խմբի դարձվածները՝ նախադասության կառուցվածք:

Ինչպես գրական հայերենում, Ղարաբաղի բարբառում ևս ոչ հաղորդակցական դարձվածային միավորները կարող են փոխաբերաբար արտահայտել առարկա կամ երևույթ, առարկայի կամ գործողության որակական հատկանիշ, գործողություն կամ նշել խոսողի գնահատողական վերաբերմունքը առարկայի կամ երևույթի նկատմամբ՝ այդ առումով հարաբերակցվելով համապատասխան գոյական, ածական, մակբայ, բայ և վերաբերական խոսքի մասերին: Ղարաբաղի բարբառի դարձվածային միավորները ենթարկվել են հետևյալ դասակարգման՝ **գոյականական, ածականական, բայական, մակբայական և եղանակավորող դարձվածային** միավորներ (Մինասյան 33):

Անվանական դարձվածի այս կամ այն խոսքի մասին վերաբերելը կախված է ոչ թե բաղադրիչների իմաստային առնչությունից, այլ դարձվածի արտահայտած ամբողջական իմաստից:

¹ Դարձվածների բացատրությունները տրվում են ըստ Ա. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարանի»:

ա) **Գոյականական** են **հալալ ծըծկեր** (ազնիվ մարդ), **պեց ըշկերավ արագ** (ցանկալի իրականություն), **օխտը պօրտը** (ամբողջ տոհմը), **ըստըծու կօտե** (ծիածան), **ըստըծու հըղե**- (բարություն, արդարություն), **անրթանը քըրտնօնք**- (ազնիվ աշխատանք), **յըբե բաղեն խընծօր** (արտոնյալ մարդ) **ճիրատած ճեղաց**- (կարևորությունից զուրկ իր) և այլն:

բ) **Ածականական** են **մաղ կապողեն սիմ տըվող** (անամոթ, աներես), **տափուլ յեկած** (անամոթ, անզգամ), **աղու տանձ կըծած** (անտրամադիր), **մամուլ բալա** (փափկասուն՝ դժվար իրավիճակներին անընտել), **մըծացած-կուճուրացած** (մեծի նման (ասվում է երեխաների մասին), **ռանդա տված** (համաչափ, նաև՝բարեկիրթ), **գյուլլու պատառ** (շատ գեղեցիկ), **ըստծու կըրակ** (չար, անզուլթ), **ըստուծեն ծաղեգը յիրան**- (*անարատ, մաքուր*), **թօռ թակած, արեվ էրած** (շատ չարչարված, փորձություններով անցած, **ըռնու կյին** (թանկարժեք), **անրունը քախծըր**- (համակրանք առաջացնող, գրավիչ), **վըննը ծանդըր** -հղի և այլն:

գ) **Դերանվանական** են **հուլ ասիս** (ամենքը), **հուլ ասօղը** (դու), **մին ջուվար** (նա), **մին փարա** (ոմանք, որոշ):

դ) **Բայական** են. **կըլխեն պահել** (մեծարել), **թարթափն ընգնել** (1.վախից թպրտալ, 2.ծախորդության հանդիպել), **խօսկը յըտ տալ** (մերժել), **պօրտը վըբըր ընգնել** (կոփվել), **պռօշը կախ տալ** (դեմքին դժգոհ արտահայտություն տալ), **զինքը կըտօրել** (խիստ հուզվել), **նամուսը տափը կօխել** (անպատվել, պատվազրկել), **կըզօ-մըզօ անել** (1.այրել, 2.գործը դժվարացնել), **օնքը փօթ քցիլ** (մռայլվել, տխրել), **աշկին թօզ փըջիլ** (չնչին բաներով հրապուրելով՝ խորամանկությամբ խաբել), **չափարը ճըմօռել** (չափն անցնել), **կապը քաշիլ** (կարգի հրավիրել), **պօզերը տուս օնել** (չարությունը, կոպտությունը ցույց տալ) **ըստուծեն քարավ տալ** (եղածով չբավարարվել), **արեվը հուրթավը տըբնալ** (մեկուսացած ապրել), **բախտեն կըծեգը յըտ տալ** (դժբախտությունները հաջորդել իրար), **էշին չուլ ասել** (թեթև վիրավորել) և այլն:

ե) **Մակբայական՝ ռըխեն լայաղ** (իրեն վայել, արժանի), **հիտիլ կապած** (մի գծով, իրար ետևից), **քօռեն ժամը** (մուլթն ընկած), **քօռ ու փօշման** (փոշմանած), **էրկու պերան** (քիչ (խոսելու մասին)), **աշկեն տակավը** (գաղտագողի), **մըտքեն դօնն ընգած** (մտախոհ), **ջըհնամեն տակեն** (անհայտ հեռավորության վրա), **ըրեվեն գահուլը** (արևի կիզիչ պահին), **հալած յըդու նըման** (անխոչընդոտ):

զ) **Եղանակավորող. մատաղ ինիմ, բօյիտ մատաղ** (բարեմաղթանքներ՝ ուղղված թանկ մարդու), **աշկես յիրա** (սիրով, ամենայն հոժարությամբ):

Իրենց բովանդակային ընդգրկունությամբ առանձնանում են հաղորդակցական դարձվածային միավորները (սրանք ունեն նախադասության կառուցվածք, հետևապես՝ նախադասությանը հատուկ հետևյալ հատկանիշները՝ ստորոգում, հնչերանգ, մտքի ավարտվածություն): Սրանք «ժողովրդախոսակցական լեզվում ունեն մեծ գործածություն և առանձնապես վառ են արտացոլում նրա կառուցվածքային և զգացական առանձնահատկությունները (Մինասյան 66):

Ինչպես՝ **տանա դերին օրհնյալ չի կա** (*մտերիմից օգուտ չկա*), **վեջը չի** (*ուշադրություն չի դարձնում*), **հըրթնաշօրը ծալին ա** (*պատրաստվում է ամուսնանալ*), **ինքն ա վեր կա** (*անփոխարինելի է*), **շօնն էլ յօր չօնել** (*անտանելի է*), **քիզանա հինչ կ'եղիմ** (*վկայում է անկեղծության մասին*), **շեն կընաս** (օրհնանք), **մին խօսկը օխտը փուլթ մըդորավ օտվել չի** (*ասում են տիպ , ծանր խոսողի մասին*), **ամըռնը-ծըմըռնը մին խըլքը հինչ անե** (*ասում են այն ժամանակ, երբ մոռանում են որևէ բան, կամ դժվարանում են որևէ հարց լուծելիս*) և այլն:

Բարդ նախադասության կառուցվածք ունեն **իրըբեն թըքում ըս, ասում ա՝ հինչ լավ թօռ ա կյամ** (*արժանապատվություն չունեցող մարդկանց մասին*), **քաչալը ճար անօղ լինի, ուրան կըլխեն ճար կանե** (*որևէ պակասություն ունեցողը, եթե հնարավորություն ունենա, իր պակասությունը կվերացնի*), **քօն իլ, յեր կաց, բախտ**

օգի (ասում են անբան մարդու մասին, որ անսպասելի հաջողության է հանդիպել), **Աստուծ քոս ա տուվալ**. **դէյնը չի տամ**, **թա ջանը դըրփէ** (անելանելի ծանր կացության մեջ է), **անէ Զուրին, ծաղկէ Փուրին** (աշխատում, վաստակում է մեկը, արդյունքից օգտվում է մեկ ուրիշը), **թան չըս տըհալ**, **թընըթաթախ աման էլ չըս տըհալ** (ասում են տվյալ գործին, իրավիճակին բոլորովին անտեղյակ մարդուն), **կուկուն անէ, ճիճին տանէ** (ասում են այն ժամանակ, երբ մեկը աշխատում է, մյուսը՝ արդյունքը վայելում) և այլ դարձվածներ:

Բարբառային դարձվածների ուսուցման հնարներ

Ուսուցումը նպատակային դարձնելու համար որպես օրինակներ ընտրել, հատուկ կարևորել այնպիսի դարձվածներ, որոնք ըստ էության են բնութագրում արցախցու բնավորությունն ու կենսափիլիսոփայությունը՝ պատվախնդրությունը, աստվածա-պաշտությունը, համառությունը, սկզբունքայնությունը, հայրենասիրությունն ու զենքի պաշտամունքը և այլն:

Արցախցու մասին վերոնշյալ բնութագրումներն արտացոլված են լեզվամտածողության մեջ: Այդ են վկայում այսօրինակ դարձվածները. **Նամուսը շանը տըվէն, կերավ վէչ** - մարդ պետք է արժանապատվություն ունենա, **Նամուսը յըբ օնէլ** - արժանապատվությունը թույլ տալ, **Նամուսը յըբ օնէլ, դըրաղ կէնալ** - իր արժանապատվությունը պահելու համար մի կողմ քաշվել, **անախորժությունից խուսափել**, **Նամուսը շանը տալ** - արժանապատվություն չունենալ, **Նըմուսու յեսիր** - բարոյականության անձնվեր պաշտպան, **Նամուսը փօրումը օռչիլ** - միևնույն ամուսնանալը հղիանալ, **աբուռը իրեսեն** - ամոթի զգացում ունեցող, **աբուռը հախավ կընի** - ամոթը պիտի ունենալ, **պետք չէ չափն անցնել**, **աբուռը տափավը կ'ալ** - պատվի զգացումն արատավորել, **աբուռը չըփարեն տակեն տիրած չի** - պատիվը ունենալը և պահելը հեշտ բան չէ, **թասիբ / թասիբի ըղնէլ** - պատվի խնդիր դարձնել, **թասիբը յօր օնէլ** - պատվախնդրությունը, **ինքնասիրությունը ներել**, **թասիբին վըեննը կէնալ** - թասիբը պահել-մեկի պատիվը պաշտպանել, **թասիբու քըցիլ** - մեկին պատվախնդրության դրդել և այլն:

Արցախցին աստվածապաշտ ու աստվածավախ է: Միայն **Աստուծ** (Աստված) բառով մոտ 100 դարձված է գետնեղված Արմեն Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարանում»։ **Աստուծ Երկու ծերքավ ա տամ** - Աստված երկու ձեռքով է տալիս-Աստված շոբայլ է, **Աստուծ կըլխան փախած** - անհաջողակ, **Աստուծ չինիլ** - դաժան լինել, **Աստուծ ըրէյնանը տակեն պահում ա** - Աստված փրկում է, հովանավորում է, **Աստուծ մըհ ա** - մի ելք կգտնվի, **պետք չէ հուսահատվել**, **Աստուծ մաչին Նըստած** - գեղեցիկ, առատ, կատարյալ, **ըստուծեն ծըրավը քիհիլ** - բարեպաշտ, օրինավոր լինել և այլն:

Չենքը դարեր շարունակ արցախցու գոյության կարևոր երաշխիքն է եղել, և զինապաշտությունը դարձել է նրան բնութագրող գծերից մեկը. **թօրը հինչ վեր կարէ վէչ կըտրէ, հացը կըկըտրըէ** - բռնությամբ, ուժով չլուծվող հարցը խաղաղ ճանապարհով կարելի է լուծել, **բարութը կըլիէլ** - սնանկանալ, **կատրեճ կըտրըցընէլ** - ամեն ինչից զրկել, **հըհտան գ'նլլա քըցիլ** - մեկի, մի բանի կարիքը շատ զգալ, **խընչալեն քարը վեր ըղնէլ** - արժապատվությունը վիրավորվել, **թօփու գ'ուլլա** - գեղեցիկ, ամրակազմ երեխա, **բարութ կըտրըէլ** - բորբոքվել, գայրանալ:

Հաճախ դարձվածների (հատկապես դարձվածային սերտաճումների) մտապահումը իմաստի անկանխատեսելի լինելու պատճառով դժվար է լինում սովորողների համար: Առաջարկում ենք մի քանի առաջադրանքներ, որոնց կատարումը կօգնի սովորողներին ավելի հեշտ մտապահել դարձվածները: Դրանք հանձնարարվել են են ԱրԴՀ բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» բաժնի երկրորդ կուրսում, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի մագիստրատուրայի «Հայոց լեզու» բաժնի 1-ին կուրսում:

1. **Ընտրել դարձվածներ և արտահայտել նկարներով.** այս հանձնարարությունը առաջադրել ենք ԱրԴՀ բանասիրական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողներին:

Հետաքրքրական է, որ սովորողները 3 տարբեր մոտեցումներով են կատարել նշված հանձնարարությունը:

Ա. Կազմել են կոլաժ, որտեղ դարձվածը կազմող յուրաքանչյուր բաղադրիչ արտահայտված է առանձին նկարով: Այդպես արտահայտել են, օրինակ, **ա կօժ քեզ ասիմ, ա կօլա տու սկաց (նկար 1), Էշին ընգունումը քօն իլած-շրջապատի** իրադարձություններից կտրված, անտեղյակ **(նկար 2)** դարձվածները:

Բ. Ընդհանուր նկարը ներկայացնում է դարձվածի բառացի իմաստը: Այսպես արտահայտել են հետևյալ դարձվածները. **ճօտը ծռվումն ա մահլիճն անում - մարդու բնավորությունը ի սկզբանե է երևում (նկար 3), հիբ խօզը յը՛ր ընցընե ծառը- երբեք (նկար 4)** և այլն:

Գ. Նկարում երևում է նաև կապակցության դարձվածային իմաստը, ինչպես՝ **իրեսան լուս կաթել- շատ գեղեցիկ լինել (նկար 5), Աստուծ մաչին նըստած-գեղեցիկ, առատ (նկար 6)** և այլն:

Շատ ավելի մոտիվացնող կլինի, եթե սովորողներն իրենք նկարեն դարձվածը: 1-ին կուրսի ուսանողուհի Աննա Ասրյանի նկարում ևս երևում են **Աստուծ մաչին նըստած** կապակցության ինչպես դարձվածային, այնպես էլ բառացի իմաստները **(նկար 7):**

Հետաքրքիր կլինի նաև կիրառել դարձվածի բաղադրիչ բառերն արտահայտող նկարներով քարտեր, սովորողներին հանձնարարել հավաքել դարձվածները:

Դարձվածների ուսուցման գործընթացում կարելի է կիրառել նաև հետևյալ ամրապնդող առաջադրանքները.

1. Գեղարվեստական գրականությունից դուրս գրել բարբառային դարձվածները, որոշել ոճական արժեքը. որպես սկզբնաղբյուր կարելի է ընտրել արցախցի գրողներ Մ. Հովհաննիսյանի, Գ. Գաբրիելյանի, Վ. Հակոբյանի, Արտաշես Ղահրիյանի, Համլետ Մարտիրոսյանի և այլոց ստեղծագործությունները:
2. Սովորողների տարբեր խմբերի հանձնարարել ներկայացնել դարձվածներ, որոնց հիմնաբառերը պատկանեն իմաստային որոշակի խմբերի՝ կենդանանուն, բուսանուն, բնության երևույթներ, մարմնի մասեր (սովորողները կարճվածներ) և այլն:
3. Ընտրել դարձվածներ, որոնց հիմնաբառերը լինեն՝
ա) բնիկ հայերեն բառեր,
բ) արևելյան փոխառություններ,
գ) ռուսերենից կատարած փոխառություններ:
4. Առանձնացնել **հայ և թուրք** հիմնաբառերով դարձվածները, համեմատել:
5. Տրված հատվածներից¹ դուրս գրել դարձվածները, բացատրել:

1. Ինըմ ա, չինըմ, մին թաքավեր ա ինըմ: Էդ թաքավերին մին արմաղ-շարմաղ, դնջանգ՝ կընեգ ա ինում, մին էլ Էրկու տղա խօխա:

2. Թաքավերըն ապրած կենա, քնցալ ընք տըհսալ կ'ետեն ղըրաղեն մին քնսիբ մարթ՝ նըհետըն էլ Էրկու խօխա, մինգ'ել մին հարթնը, վար իրիքնանկեն ասում ա՛տուս մի կյալ, յես տուս ըմ յեկալ:

3. Էտ խեղճ մարթը ծույները վեր թըկելավ, կ'անքան զըզված, քիսամ ա հըմնում մին քաղաք տըհ'ել թաքավերեն բաղումը բաղվանչի տննում:

¹ Հատվածներն ընտրված են «Արցախի ժողովրդագիտություն» գրքի 12-րդ հատորից:

4. Այսպիսով մատաղ ծըճ, հունցը տընսում ըք՝ յըս էն ըմ մին վընսս հընգիստին հըղեցը, սոր կամ, էքոնց կամ վէ, էլ կարում չում ծըճ պահիմ, լավըն էն կընի՝ տուք մարթա մին տըճղավ քինաք, ըշխադանք անիք, ծեր կըլխեն ճարը տըճսնաք:

5. Արչեն քօհնն կըռէք՝ ա ինում ըղվէսին յիրա, ըսքըսում ա ըսլանեն տակը տալը:

6. Շընաճանջը կըտաղում ա, հախէ-նըհախէ լօխճին կըծում:Մի օր էլ աշկը ունքան էնքան ա պըցըրանում, վար մըթկումը տընում ա՝ ասլանեն կըծէ ըսպանէ, ինքը տննա թաքավէր:

7. Զամի ախպեր, մարթը ճօկ հէյվան ա, նըրա օժժավ կարալ չըս յախնէս, թա օգում ըս կօրծըտ տէսնաս, պիտի կօք տաս, քախճըր լուգի պինըցընէս, սիլի-բիլի անէս, վար կարաս խաթիրը քըթաննաս:

Եզրակացություն

Ղարաբաղի բարբառի դարձվածները Արցախի դարավոր ժողովրդի իմաստությունը և կենսափորձով թրծված միավորներ են, որոնց ուսուցմամբ սովորողներին կփոխանցվի նաև այդ ժողովրդի մտածողությունն ու արժեհամակարգը: Եվ բարբառային իրողությունների ուսուցումը նպատակային ու արդյունավետ դարձնելու յուրաքանչյուր մեթոդ և հնար կնպաստի դրանց պահպանմանը ոչ բարբառային միջավայրում:

Աղյուսակ 1. Դարձվածների համեմատական քննություն

Բարբառային դարձված	Գրական տարբերակ	Դարձվածային իմաստը	Գրական հայերենի տարբերակը
աշկումը մազ փրսնել	աչքում մազ բուսնել	երկար սպասել	աչքի մեջ մազ բուսնել
Երկու վըննալ թալակ ըղնել	երկու ոտքով թակարդն ընկնել	սաստիկ խաբվել, փորձանքի մեջ ընկնել	երկու ոտքով թակարդն ընկնել
սըրտեն փօշը տոնս օնել	սրտի փուշը հանել	ուրախացնել, մխիթարել	սրտի փուշը հանել
հաքյին ծալիլ, տակեն տինիլ	պոչը ծալել, դնել տակը	հեռանալ, մի կողմ քաշվել	պոչը քաշել
կուռնըտակեն ծըմերուկ տինիլ	թևատակին ձմերուկ դնել	ոգևորել	թևերի տակ ձմերուկ դնել
Էշը հինչ ա գիդում մօշը հինչ ա	Էշը ինչ է իմանում մոշը ինչ է	հիմարը, անհասկացողը լավի արժեքը չի իմանա	Էշն ինչ իմանա՝ նուշն ինչ բան է
ալլերը մաղել, մաղը կախ տալ	ալյուրը մաղել, մաղը կախել	անելիք գործերը վերջացնել	ալյուրը մաղել, մաղը կախել
սադանեն ծին յը՛ր ինիլ	սատանայի ծին հեծնել	համառ, կամակոր լինել	սատանայի ծին հեծնել
յը՛րէ բաղէն խընձօր	վերին այգու խնձօր	արտոնյալ	վերին արտի ցորեն
արու նըման դըվումը վըննը կէնալ	սարի պես թիկունքում կանգնել	մեկին ուժեղ անընկճելի պաշտպան լինել, հովանավորել	սարի թիկունքում կանգնել

Նկար 1.



Նկար 2



Նկար 3



Նկար 4



Նկար 5



Նկար 6



Նկար 7



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Արցախի ժողովրդագիտությունը. բանահյուսություն*, (Աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ Բ.Գ.Թ., դոցենտ, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Արմեն Յուրիկի Սարգսյանի), հհ 1-12, Երևան, «Արմավ» հրատ, 2020 -2024թթ.:
2. *Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան*, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2011, 1404 էջ:
3. Դավթյան, Կարո. *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզ*, Հայկ. ՍՍՀԳԱ հրատարակչություն, Երևան, 1966, 508 էջ:
4. Կատվայան, Վիկտոր. *Հայ բարբառագիտության հարցեր*. «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 2014, 231 էջ:
5. *Հայոց լեզվի բարբառային բառարան*, (գլխ. խմբագիր՝ Արտեմ Սարգսյան), հհ 1-4, ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, 2001-2007, 428-432-426-451 էջ:
6. Հովհաննիսյան Լավրենտի. *Գրաբարի և Ղարաբաղի բարբառի առնչության հարցի շուրջ*. ՊԲՀ, N 1, Երևան, 1977, էջ 141-152:
7. Մինասյան, Շողեր. *Ղարաբաղի բարբառի դարձվածները*. «Դիզակ պլուս» հրատարակչություն, Ստեփանակերտ, 2007, 126 էջ:
8. Պապոյան, Արտաշես. *Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը*. Երևան, 1970:
9. Սարգսյան, Արմեն. *Ղարաբաղի բարբառի բառարան*, «Էդիթ պրինտ» հրատարակչություն, Երևան, 2013, 846 էջ:

WORKS CITED

1. Arcaxi jhoghovrdagitut'yuny'. banahyusut'yun [Artsakh Demography: Folklore], hh 1-12, Erevan, «Arnav» hrat,2020 -2024t'. (in Armenian)
2. Bediryan Petros, Hayeren dard'vac'qneri y'ndard'ak bacatrakan bar'aran [Extensive Explanatory Dictionary of Armenian Phraseology] EPH hratarakchut'yun, Erevan, 2011. (in Armenian)
3. Davt'yan Karo, Ler'nayin Gharabaghi barbar'ayin qartez, [Dialectal Map of Nagorno-Karabakh] Hayk. SSHGA hratarakchut'yun, Erevan, 1966. (in Armenian)

4. Katvalyan Viktor, Hay barbar'agitut'yan harcer, [Issues of Armenian Dialectology], «Hayastan» hratarakchut'yun, Erevan, 2014, 231 e'j. (in Armenian)
5. Hayoc lezvi barbar'ayin bar'aran, [Dialect Dictionary of the Armenian Language], hh 1-4 ,HH GAA H.Atwar'yan anvan lezvi institut, Erevan, 2001-2007, 428-432-426-451 e'j. (in Armenian)
6. Hovhannisyan Lavrenti, Grabari ev Gharabaghi barbar'i ar'nchut'yan harci shurj, [On the Relationship between Grabar and Karabakh Dialects] PBH, N 1, Erevan, 1977, e'j 141-152. (in Armenian)
7. Minasyan Shogher, Gharabaghi barbar'i dard'vac'nery', [Karabakh Dialect Idioms], «Dizak plyus» hratarakchut'yun, Step'anakert, 2007 (in Armenian)
8. Papoyan Artashes, Paruyr Sevaki chap'ac'oyi bar'apashary', [Vocabulary of Paruyr Sevak's Verse], Erevan, 1970. (in Armenian)
9. Sargsyan Armen, Gharabaghi barbar'i bar'aran, [Dictionary of Karabakh Dialect], «E'dit' print» hratarakchut'yun, Erevan, 2013, 846 e'j. (in Armenian)

TEACHING PHRASEOLOGICAL UNITS OF THE KARABAKH DIALECT

RENA MOVSESYAN

*Brusov State University, Department of Armenian Studies,
NAS RA, Language Institute after H. Acharyan, Researcher,
Ph.D. in Philology, Associate Professor;
Yerevan, the Republic of Armenia*

Nowadays, teaching the Karabakh dialect is of great importance, since the dialect is cut off from the dialect environment, and Azerbaijan is pursuing a consistent policy of destroying Artsakh studies, and one of the ways to combat this is teaching and preserving the Karabakh dialect and the linguistic thinking, culture, worldview and value system reflected in it, forming national self-awareness, self-confidence and the ability to defend oneself in generations.

Of all linguistic units, phraseological units reflect the thinking, customs, moral values, and biophilosophy of the people best, since they are semantically condensed constructions polished in the vernacular.

The goal of our work is to propose principles and methodological techniques that will make the study of phraseological units of the Karabakh dialect and through them the linguistic thinking and biophilosophy of the Artsakh people more effective and comprehensive.

To achieve this goal, we have put forward the following tasks:

1. To study Karabakh phraseological units, the principles of their classification.
2. To determine the vitality of the mentioned phraseological units by surveying representatives of different generations.
3. To apply the proposed methodological techniques in different audiences to determine their effectiveness.

The article applies the methods of analysis, comparison and contrast.

The following principles contribute to the effectiveness of teaching dialect phraseological units:

1. Teach phraseological units using the comparative method, comparing them with the corresponding units of the literary Armenian language, relying on students' knowledge of the phraseology of the literary Armenian language.

2. Give special importance to and select as examples such phraseological units that give a more complete idea of the most dominant character traits, way of life and thinking of the Artsakh people.

3. Effectively combine traditional and modern methods in the educational process, apply methodological techniques that will make learning interesting and non-monotonous.

4. Take into account the frequency of use of these phraseological units, their vitality, both in oral speech and in fiction.

Keywords: *Karabakh dialect, linguistic thinking, comparative method, quadrilateral table, phraseological convergence, phraseological unity, phraseological combination, keyword, literal transposition.*

ОБУЧЕНИЕ ФРАЗЕОЛОГИЗМАМ КАРАБАХСКОГО ДИАЛЕКТА

РЕНА МОВСЕСЯН

доцент кафедры арменоведения

Государственного университета им. В. Брюсова,

научный сотрудник Института языка им. Г. Ачаряна НАН РА,

кандидат филологических наук,

г. Ереван, Республика Армения

Сегодня преподавание карабахского диалекта имеет огромное значение, поскольку диалект оторван от диалектной среды, а Азербайджан проводит последовательную политику уничтожения арцаховедения, и одним из способов борьбы с этим является преподавание и сохранение карабахского диалекта и отраженного в нем языкового мышления, культуры, мировоззрения и системы ценностей, формируя в поколениях национальное самосознание, уверенность в себе и способность к самообороне.

Из всех языковых единиц фразеологизмы лучше всего отражают мышление, нравы, моральные ценности, биофилософию народа, поскольку представляют собой семантически конденсированные конструкции, отшлифованные в народном языке.

Цель нашей работы – предложить принципы и методические приемы, которые сделают более эффективным и комплексным изучение фразеологизмов карабахского диалекта, а через них – языкового мышления и биофилософии арцахцев.

Для достижения этой цели мы выдвинули следующие задачи:

1. изучить фразеологизмы карабахского диалекта, принципы их классификации.

2. определить константность упомянутых нами фразеологизмов путем опроса представителей разных поколений носителей диалекта.

3. опробовать предложенные методические приемы в разных аудиториях с целью определения их эффективности.

В результате проведенного исследования можно прийти к выводу о том, что соблюдение следующих принципов способствует эффективности обучения диалектным фразеологизмам:

1. использование сопоставительного метода, при котором сравниваются фразеологизмы карабахского диалекта с соответствующими единицами литературного армянского языка, с опорой на знания учащихся о фразеологии литературного армянского языка.

2. Особо выделять и выбирать в качестве примеров такие фразеологизмы, которые дают более полное представление о самых выраженных чертах характера, образа жизни и мышления арцахского / карабахского народа.

3. Эффективно сочетать традиционные и современные методы в учебном процессе, применять методические приемы, которые сделают обучение интересным и разнообразным.

4. Учитывать частоту употребления данных фразеологизмов и их устойчивость как в устной речи, так и в художественной литературе.

Ключевые слова: *карабахский диалект, языковое мышление, сопоставительный метод, четырехполосная таблица, фразеологическая конвергенция, фразеологическое единство, фразеологическое сочетание, ключевое слово, буквальная транспозиция.*